

Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլի հարցաշարերի պատասխաններ

9-րդ դասարան

1. Հայ բազմադարյան գրականության անկանգ երթում Ոսկեդարը մեր ժողովրդի՝ աշխարհին ներկայանալու այցեքարտերից մեկն է՝ իր անկրկնելի այբուբենով, հարուստ մատենագրությամբ, վարքագրությամբ, թարգմանական մատյաններով: Չունենալով պետություն ու պետականություն՝ հայ ժողովրդի նվիրյալ գավակները աշխարհին պարզեցին մեր գոյության առհավատյան՝ հայոց գիրն ու դպրությունը: Գրերի գյուտից հետո անհրաժեշտ էր հայացնել համաշխարհային գրավոր մշակույթի նվաճումները, որոնցից **Աստվածաշունչ** մատյանը համարվել է **Թարգմանությունների թագուհի** և մինչ օրս մնում է այդպիսին: Այնուհետև հունարենից ու ասորերենից թարգմանվում են բազմաթիվ կրոնական, փիլիսոփայական, ճարտասանական ու գեղարվեստական երկեր, որոնց շնորհիվ սկզբնավորվում ու զարգանում է հայ ինքնուրույն գրականությունը: Ասպարեզ են իջնում հայ խոշոր ճարտասաններ, քերականներ, փիլիսոփաներ, որոնց մեջ նշանավոր են Եզնիկ Կողբացին ու Դավիթ Անհաղթը: Սկսվում է հայ գրականության Ոսկեդարը: V դարի մատենագրության ամենահարուստ բաժինը պատմագրությունն է՝ պատմիչների հետևյալ հերթագայությամբ. Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Եղիշե, Ղազար Փարպեցի, Մովսես Խորենացի:

V դարը այսօր էլ մեր ինքնության ու հաղթանակների անկապտելի գրավականն է, որ ազգային արժանապատվության ու հպարտության դասեր է տալիս և՛ մեզ, և՛ օտարներին: (Քո նախընտրած պատմիչի մասին գրի՛ր ինքդ):

Նամակի նմուշ: Բարև Ձեզ, իմ անկրկնելի Ուսուցիչ

Երկար մտորումներից հետո երկյուղածությամբ ձեռքս եմ վերցնում գրիչը, կկարողանա՞մ հանդգնել գրուցել Մեծիդ հետ, ներկայացնել պատասխան աղերսող հարցերս (դրանք այնքա՛ն շատ են): Ես Նաիրուհին եմ, ապրում եմ քաղաքամայր Երևանում (Ձեր ապրած դարում այն աննշան էր), սովորում եմ IX դասարանում. դա Ձեզ ոչինչ չի ասի, քանի որ V դարի դպրոցները այլ կառուցվածք ունեին:

Երբ մեր ուսուցչուհին մեզ ներկայացրեց Ձեր մատյանը, ես ապշանք ու հպարտություն ապրեցի միաժամանակ: Ինչպիսի՛ սիրով ու տքնությամբ էք ձեռնամուխ եղել Ձեզ հանձնարված գործին... Մնացյալը՝ ինքդ:

2. Բանահյուսությունը ժողովրդի բանավոր ստեղծագործությունն է, նրա հավաքական բանականության ու հավաքական հույզի արգասիքը: Անհիշելի ժամանակներից միջև մեր օրերը այն, անընդհատ նորանալով ու նորոգվելով, իր մեջ է առել ժողովրդի աշխարհընկալումը, կենսափորձը, երազանքները, ըմբռնումներն ու իմաստությունը: Աշխարհի բոլոր ժողովուրդներն ունեն իրենց բանավոր ստեղծագործությունը և, բոլորի մեկնաբանություններն էլ գրեթե նույնն են՝ այն ժողովրդի մտածողության, կենսակերպի, գիտակցության արտացոլումն է տարբեր ժամանակներում: Հայ ժողովուրդն էլ մյուսների նման ստեղծել է իր բանավոր պատմությունը, իր աստվածներն ու հավատալիքները, իր հրաշալի երգերը, ասքերը, առասպելները, առակներն ու զրույցները: Շնորհիվ Քերթողահոր՝ մեզ են հասել հայ բանահյուսության բացառիկ նմուշներ(իհարկե, դրանք մեր հարստության մի չնչին մասն են միայն), որոնցից մենք տեղեկանում ենք՝ ումի՞ց ենք ծագել, ե՞րբ ենք իջել պատմության բեմահարթակ, ի՞նչ դեր ենք ունեցել մարդկության քառուղիներում: «Հայկ և Բել» վիպերգի ժողովրդական բնագիրը մեզ չի հասել: Մեզ հայտնի է միայն վերջին խմբագրությունը, որ պահպանվել է Պատմահոր և Սեբեոս եպիսկոպոսի գործերում: Այս պատմիչները այս վիպերգի միջոցով տվել են հայ ժողովրդի ծագման պատմությունը, որից մենք տեղեկանում ենք, որ հսկաներից մեկը՝ Բելը, ցանկանում էր իշխել բոլոր հսկաների վրա, սակայն «քաջագանգուր ու հաստաբազուկ, ուշիմ և խոհեմ հսկան» չի հպատակվում նրան և, դաժանորեն պատժելով բռնակալին, հաստատում է իր թագավորությունը՝ Հայկական բարձրավանդակը մեկընդմիջո դարձնելով հայ ժողովրդի հայրենիքը: Պատմահայրը նկարագրում է հակառակորդների ոչ միայն արտաքինը, այլև ներքին բարեմասնություններն ու թերությունները, որից պարզ է դառնում, որ բռնակալները օժտված են չարությամբ, ռիսակալությամբ, վախկոտությամբ: Այսպիսինն էր բռնակալ Բելը, որը սպանվում է արդար պատերազմում: Վիպերգն արտացոլում է օտար զավթիչների դեմ հայերի մղած հերոսամարտերը՝ հավաստելով, որ բռնակալները դատապարտված են կորստյան: Տիտանյան արքան նույնպես քաջ է, լայնաբազուկ, խրոխտ, «բայց նա հաստ աղեղով հզոր նետաձիգ չէ», նա թաքնվում է իր «բազմաթիվ ամբոխի անկարգ հրոսակի հետևում», «զարհուրելով հետ է քաշվում այն բլուրը, որտեղից իջել էր»: Բելը չարի, նվաճողի, բռնակալի կերպարն է ամբողջացնում, ու նրա պարտությունն ու մահը դաս են բոլոր ժամանակների նվաճողների համար: Մյուս բռնակալը, որ փորձել է տիրել Հայաստանին, Աժդահակն է. դարձյալ ահեղ հսկա՝ սերված դևերից: Ինչպես Բելի, այնպես էլ այս հսկայի ահեղ արտաքինի տակ ծվարել է վախկոտ, նենգ, խորամանկ մեկը, որն իր արժանի պատիժն է ստանում հայոց հզոր և իմաստուն արքայից՝ Տիգրանից՝ կորցնելով ամեն ինչ, զրկվելով կյանքից: Այլ է Շամիրամը. այս գեղեցկուհի բռնակալի հոգում հավասարպես ծվարել են իշխանատենչությունն ու տոփանքը(գուցե և սերը): Իր կործանիչ հմայքով չկարողանալով տիրել հայոց արքային՝ Արա Գեղեցիկին, նա փորձում է բռնությամբ տիրել ն՝ Արային, և՛ Հայաստանին: Սակայն այս դեպքում էլ հաղթում է բարոյականությունը, պարտվում է սիրո մեջ «շամբռնտաշուրթ», «վավաշոտն ու

ցանկասեր» տիկինը, բայց տիրում է Հայոց աշխարհին: Մակայն այս հաղթանակը կատարյալ պարտություն էր նրա համար, քանի որ նա ավելի քան Արային էր տենչում: Անվերադարձ կորցնելով նրան՝ ցավից ու վշտից խելագար, անպարտելի թագուհին կորցնում է ամեն ինչ՝ սեր, իշխանություն, կյանք՝ քարանալով այն, երկրում, որին տենչում էր տոփանքով ու... Գուցե և սիրով..

3. Հանճարեղ սիրերգակ, մեծ մտածող, «խալխի նոքար» Մայաթ- Նովայի ստեղծագործությամբ փակվում է միջնադարի բանաստեղծության վերջին էջը: Մակայն հետագա բոլոր ժամանակների բանաստեղծները որպես դասագիրք են օգտագործել մեծ մտածողի տաղերը՝ սուղվելով սայաթնովյան խորունկ ծովում՝ որոնելու այն կախարդական «զարան»՝ ծովային ծաղիկը, որի բույրով արբած՝ ուխտի են գնում անգուգական հանճարի երգին ու իմաստնությանը:

Մայաթ- Նովան աշուղ- բանաստեղծ է. աշուղ է, քանի որ երգում է իր անձնական զգացմունքները, և բանաստեղծ է, քանի որ անձնականից վերաճում է համամարդկայինի, դառնում է ցանկացած ժամանակաշրջանի մարդու ցավերի թարգմանը:

Նա ապրել է վրաց արքունիքում, վայելել է Հերակլ արքայի բարեհաճությունը, սակայն չար ու նախանձ էին մարդիկ, որոնք չէին հանդուրժում պալատական երգչի ու արքայադուստր ու արքայաքույր Աննայի սերը և չարախոսում են արքայի մոտ՝ հասնելով նրա արտաքսմանը արքունիքից: 1753-ին այդ առիթով գրում է Հերակլ արքային ուղղված հանճարեղ խաղը, որտեղ ոչ թե արդարանում է, այլ հիշեցնում է արքային՝ չհավատալ բանսարկություններին և բարձր ինքնագնահատությամբ հաստատում է իր բացառիկությունն ու հանճարը: «Յադերին» հավատացող արքային անհասկանալի են երգչի հանճարն ու ազնվությունը, ուստի՝

Ամեն մարթ չի կանա խըմի՝ իմ ջուրըն ուրիշ ջըրեն է.

Ամեն մարթ չի կանա կարթա՝ իմ գիրըն ուրիշ գըրեն է:

Այո՛, այսօր էլ կան մարդիկ, որոնց, ավա՛ դ, ուշ են հասկանում, բայց նրանք «ուշ-ուշ են գալիս, բայց ոչ ուշացած», ուրեմն՝ շտապենք հասկանալ նրանց:

Մայաթ-Նովայի մասին գրել են՝ Թումանյան՝ Խաղով եկավ...

Չարենց՝ Ոսկի բառեր...

Ծիրազ՝ Մասիս սարը քեզ քամանչա...

Կապուտիկյան՝ Չի մեռնի այն ժողովուրդը...

Տողերի շարունակությունները գրելու է մասնակիցը:

4. Յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր ազգային վեպը, որը այդ ժողովրդի պատմական զարգացման վկայականն է, տվյալ ժողովրդի նվիրական երազանքների առհավատյան: Մեր ժողովուրդն էլ ստեղծել է իր բանավոր վեպը, իր պատմական զարգացման վավերաթուղթը՝ արտահայտելով իր հայրենասիրական, ազատասիրական,

մարդասիրական նկրտումները, վավերացնելով իր բարության, անսահման ներման ու լուսավոր ապագայի երազանքը: Հայոց ավանդավեպը կամ էպոսը հիմնականում ձևավորվել է VII- X դարերում՝ արաբական արշավանքների շրջանում, բայց նրա արմատները մխրճված են վաղնջական ժամանակների լաբիրինթում՝ մարդկության ձևավորման ակունքներում: Հարյուրավոր տարիներ այն պատմվել է բանավոր, երգվել է գուսանների կողմից, յուրաքանչյուր երգասաց մի նոր դրվագ է ավելացրել կամ պակասեցրել մինչև երանելի 1874 թվականը, երբ հայ ժողովրդի երախտավոր զավակներից մեկը՝ Գարեգին Սրվանձտյանցը, Մշո դաշտի Առնիստ գյուղի ասացող Կրպոյից գրի է առել մի պատում և տպագրել «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» վերնագրով: Երկրորդ պատումը գրի է առել անվանի բանահավաք- գրականագետ Մանուկ Աբեղյանը մոկացի պանդուխտ Նախո քեռուց և տպագրել 1889-ին «Դավիթ ու Մհեր» վերնագրով: Բայց, մինչև հայ բանահավաքները, մեր էպոսի մասին հիշատակել են պորտուգալացի ճանապարհորդներ Անտոնիո Տենրեյրոն և Մեստրե Աֆոնսոն, որոնք իրարից անկախ եղել են Սասունում, լսել մեր սքանչելի ավանդավեպը և գրի առել ու տպագրել: Այս փաստը, սակայն, հայտնի է դարձել ընդամենի մի քանի տասնամյակ առաջ: Նրանք լսել են Դավթի և Խանդուրի մասինն այնքան հիացել, որ տպագրել են Պորտուգալիայում:

1939—ին մեծ շուքով ու հանդիսավորուելյամբ նշվեց «Սասնա ծռեր» էպոսի հազարամյակը. 60 պատումներից կազմվեց համահավաք տեքստ՝ «Սասուցի Դավիթ» վերնագրով: Կազմողներն էին մեծ երախտավորներ ակադեմիկոս Հովսեփ Օրբելին, պրոֆեսոր Գևորգ Աբովը և անվանի բանահավաք Արամ Ղանալանյանը:

Էպոսի 1000-ամյակի առիթով Ավետիք Իսահակյանը գրեց «Մեր պատմիչները և մեր գուսանները» հրաշալի բանաստեղծությունը, որը անգուգական ձոներգ է՝ նվիրված մեր ժողովրդի նվիրյալ զավակներին, ովքեր անմարդկային պայմաններում գրի են առել մեր պատմությունը, երգել մեր հաղթանակները:

Էպոսի գրական մշակումների հեղինակներ են Հովհաննես Թումանյանը, Ավետիք Իսահակյանը, Եղիշե Չարենցը, Նաիրի Չարյանը, (փորձեր են արել, սակայն չեն ավարտել Համաստեղը, Դանիել Վարուժանը, Կոստան Չարյանըն այլք): Լավագույնը անմահ լռեցու մշակումն է: 1964-ին մեր էպոսը առաջին տեղն է զբաղեցրել էպոսների միջազգային մրցույթում, իսկ հանճարեղ Երվանդ Քոչարի հոյակապ քանդակը դարձել է մեր ժողովրդի ամենափայլուն խորհրդանիշներից մեկը:

«Հայկական էպոսը հայ ցեղի ապրած կյանքի ու հոգեկան կարողությունների հոյակապ գանձարանն է ու իր մեծության անհերքելի վկայությունը աշխարհի առջև»:

Հովհաննես Թումանյան

Գնահատման չափանիշները /9-րդ դասարան/

1-ին հարց 1 ենթահարց՝ 1 մ 2 ենթահարց՝ 2 մ. 3 ենթահարց՝ 2 մ.	2-րդ հարց 1 ենթահարց՝ 3 մ 2 ենթահարց՝ 2 մ.
3-րդ հարց 1 ենթահարց՝ 1 մ 2 ենթահարց՝ 2 մ. 3 ենթահարց՝ 2 մ.	4-րդ հարց Բոլորին 1-ական մ.